ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» մայիսի 2021 թվականի N 551

2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-ԻՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՐ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՊԱՐՏՎՈՂ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՄՈՒԾՎԱԾ ՆԱԽԱՎՃԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով ***Արայիկ Գրիգորյանի*** 2021 թվականի մայիսի 24-ի թիվ 2642/07, դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 2021 թվականի մայիսի 24-ին Չարենցավանի համայնքապետարանում կայացած Չարենցավան համայնքում գտնվող հողատարածքի աճուրդի նախավճարը՝ **965000 ՀՀ դրամ գումար** վերադարձնել աճուրդում պարտվող կողմ ճանաչված ***Արայիկ Գրիգորյանին:***
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«27» մայիսի 2021 թվականի N 550

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 1635-Ն որոշման դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի սեփականություն համարվող 07-037-0202-0001 ծածկագրով հողատարածքից առանձնացնել 0.62086 հա մակերեսով հողատարածք՝ նկատի ունենալով, որ հողամասի նպատակային նշանակությունն է գյուղատնտեսական, իսկ գործառնական նշանակությունը՝ վարելահող:

2. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» մայիսի 2021 թվականի N 549

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի ԹԻՎ 14 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, քննարկելով Չարենցավան քաղաքի 1-ին թաղամասի 8-րդ շենքի թիվ 9 հասցեի բնակիչ ***Անդրանիկ Քոչարյանի*** 2021 թվականի մայիսի 26-ի թիվ 2738/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավանի քաղաքապետի 1997 թվականի մայիսի 15-ի «Պետական, հանրային և համայնքային բնակ. ֆոնդի բնակարանների անհատույց սեփականաշնորհում թույլատրելու մասին» թիվ 14 որոշման մեջ (անշարժ գույքի գտվելու վայր՝ Չարենցավան քաղաք, 2-րդ միկրոշրջան, 1-ին թաղամաս թիվ 16 բնակարան) ***«Աղաբեկյան Դիանա»*** անունը հոխարինել ***«Աղաբեկյան Դիանա»*** անունով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀԿոտայքիմարզիՉարենցավանհամայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանիանվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» մայիսի 2021 թվականի N 548

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 18-ի «Չարենցավան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 9 որոշմամբ սահմանված կարգը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները՝ ֆինանսական օգնություն ստանալու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից.

Բարսեղյան	Ռուզան	AS0663329	30 000	դրամ
Աբրահամյան	Խորեն	AN0258756	30 000	դրամ
Դարմանյան	Արմենուհի	AM0455937	25 000	դրամ
Պողոսյան	Շուշանիկ	AM0448338	15 000	դրամ
Դիվանյան	Սերգեյ	AT0431103	15 000	դրամ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«25» մայիսի 2021 թվականի N 547

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 07-Ի ԹԻՎ 672 ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 206 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետի 06.05.2021 թվականի գրությունը, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2017 թվականի դեկտեմբերի 07-ի «Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 672 որոշման N34 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխան հավելվածի:

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 24-ի «Չարենցավան համայնքի ղեկավարի խորհրդականի պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին» թիվ 206 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխան հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի
համայնքի ղեկավարի 2021 թվականի
մայիսի 25-ի N 547 որոշման

«Հավելված N 34
ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի
համայնքի ղեկավարի 2017 թվականի
դեկտեմբերի 7-ի N 672 որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ՀՀ ԿՈՏԱՅՔԻՄԱՐԶԻՉԱՐԵՆՑԱՎԱՆԻՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻԱՇԽԱՏԱԿԱԶՄԻԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ
3.1-13
(ծածկագիրը)

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետև՝աշխատակազմ) զարգացման ծրագրերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետի պաշտոննընդգրկվում է համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախմբում:
2.Աշխատակազմի զարգացման ծրագրերի և տեղեկատվական տեխնոլոգիաներիբաժնի առաջատար մասնագետին(այսուհետև՝առաջատար մասնագետ),«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով (այսուհետև՝օրենք) սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է աշխատակազմիքարտուղարը (այսուհետ՝ քարտուղար):

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Առաջատար մասնագետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է բաժնի պետին:
4. Առաջատար մասնագետը իրեն ենթակա աշխատողներ չունի:
5. Առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի գլխավոր մասնագետը կամ բաժնի առաջատար մասնագետը՝ բաժնի պետի հայեցողությամբ:
Օրենքով նախատեսված դեպքերում բաժնի առաջատար մասնագետին փոխարինում է համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ սույն պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձը, իսկ դրա անհնարինության դեպքում այլ անձը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:
6. Առաջատար մասնագետը՝
ա) բաժնի աշխատանքների կազմակերպման, ծրագրման, համակարգման, ղեկավարման և վերահսկման լիազորություններ չունի.
բ) կատարում է բաժնի պետի հանձնարարականները.
գ) պատասխանատվություն է կրում օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները ևտրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, լիազորություններըվերազանցելու համար:

3. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.Առաջատար մասնագետը մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կատարմանը:

4. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Առաջատար մասնագետը՝

ա) աշխատակազմի և բաժնի ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում՝աշխատակազմի աշխատողների, այդ թվում՝ այլ բաժինների աշխատողների և պաշտոնատարանձանց հետ.

բ) աշխատակազմից դուրս շփվում է բաժնի պետի հանձնարարությամբ.

գ) աշխատակազմից դուրս որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություններ չունի:

5. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9.Առաջատար մասնագետը, բաժնի պետի հանձնարարությամբ, մասնակցում է բաժնի առջևդրված գործառույթներից բխող խնդիրների լուծմանը և գնահատմանը:

Առաջատար մասնագետըբաժնի առջև դրված գործառույթներից բխող բարդխնդիրների բացահայտմանը, դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներինմասնակցելու լիազորություններ չունի:

6.ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Առաջատար մասնագետը՝

ա) ունի առնվազն միջնակարգ կրթություն:

բ) ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի, «Տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասինե», «Հանրային ծառայությանմասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Անձնական տվյալների պաշտպանության մասին»,«Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքների, բաժնի կանոնակարգի և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը:

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելուունակություն:

7.ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Առաջատար մասնագետը՝

ա) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները, դրանք կատարում է ժամանակին ևպատշաճ որակով:

բ) բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է համապատասխան տեղեկատվականհամակարգերի սպասարկման, տվյալների մշակման, տեղեկատվության /ցուցակներ, գրաֆիկներ,տեղեկանքներ/ և վերլուծական նյութերի պատրաստման աշխատանքներով:

գ) անհրաժեշտության դեպքում բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբմասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլկազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին և այլ միջոցառումներին:

դ) անհրաժեշտության դեպքում իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում եբաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ,միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ:

ե) բաժնի պետին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը.

զ) իրականացնում է աշխատակազմի տեղեկատվական համակարգի տվյալների արդիականացման, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի համար վերլուծությունների և համապատասխան կանխատեսումների կատարման աշխատանքներ,

է) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.

ը) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով չսահմանված այլ լիազորություններ.

թ)մասնակցում է համայնքի տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը՝ մասնավորապես տեղեկատվական տեխնոլոգիաների և զբոսաշրջության ոլորտում:

ժ)աշխատակազմի քարտուղարի հսկողությամբ և համայնքի ղեկավարի խորհրդականի ղեկավարմամբ իրականացնում է գաղտնի գործավարության վարման և գաղտնիության ռեժիմի ապահովման աշխատանքները:

Առաջատար մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլիրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

8.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Առաջատար մասնագետին օրենքով սահմանված կարգով շնորհվում է ՀՀ համայնքայինծառայության առաջին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան: »

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան
համայնքի ղեկավարի 2021 թվականի
մայիսի 25-ի N 547 որոշման

«Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան
համայնքի ղեկավարի 2021 թվականի
փետրվարի 24-ի N 206 որոշման

ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմում ընդգրկված համայնքի ղեկավարի խորհրդականի պաշտոնը հանդիսանում հանրային պաշտոնների համայնքային խմբի հայեցողական տեսակի պաշտոն:
2. Համայնքի ղեկավարի խորհրդականին «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներով սահմանված կարգով պաշտոնին նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի ղեկավարի խորհրդականը

3. անմիջականորեն ենթակա և հաշվետու է համայնքի ղեկավարին:
4. ըստ անհրաժեշտության հանձնարարություն է տալիս աշխատակազմի համայնքային ծառայության գլխավոր, առաջատար և առաջին կարգի մասնագետին:
5.պատասխանատվություն է կրում օրենքների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների, այլ իրավական ակտերի պահանջներըչ կատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ լիազորությունները վերազանցելու, իր առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
6.լուծում է իր առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներն և ընդունում որոշումներ:
7.բացակայության դեպքում նրան փոխարինում է համայնքի ղեկավարի օգնականը՝ համայնքի ղեկավարի հայեցողությամբ:

3. ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի ղեկավարի խորհրդականը

8. կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն.
9.համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում՝ իրեն հանձնարարված բնագավառներին վերաբերող հարցերի քննարկմանը.
10. համայնքի ղեկավարի հանձնարարությամբ հրավիրում է խորհրդակցություններ, կազմակերպում իրեն հանձնարարված հարցերի քննարկումներ, կատարում է համայնքի ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

4. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի ղեկավարի խորհրդականը

11. աշխատակազմի ներսում իր լիազորությունների շրջանակներում շփվում է համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու անդամների, աշխատակազմում հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի քարտուղարի, ինչպես նաև աշխատակազմի ստորաբաժանումների պետերի և այլ աշխատողների հետ.

12 համայնքի ղեկավարի հանձնարարությամբ աշխատակազմից դուրս իր լիազորությունների շրջանակներում շփվում և հանդես է գալի սորպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության այլ համայնքների և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով և այլն:

5. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Համայնքի ղեկավարի խորհրդականը

13. Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմինների և աշխատակազմի ռազմավարական, կազմակերպական և մասնագիտական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին.

6.ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի ղեկավարի խորհրդականը

14. ունի բարձրագույն կրթություն հանրային ծառայության առնվազն երեք տարվա կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ և լրացել է 25 տարին
15. ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի, «Տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Հարկերի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Աշխատանքային օրենսգրքի», աշխատակազմի կանոնադրության, բաժնի կանոնակարգի և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն.
16. ունի տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
17. տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
18. ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
19.կարդում, կարողանում է բացատրվել որևէ օտար լեզվով:

7.ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի ղեկավարի խորհրդականը

20. պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում զեկուցումներ, անհրաժեշտ վերլուծական նյութեր իրենց հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի, երևույթների և իրադարձությունների մասին և առաջարկություններ առկա հիմնահարցերի լուծման վերաբերյալ.
21.ապահովում է զորահավաքային նախապատրաստության, զորահավաքի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների բնագավառներում համայքապետարանի գործառույթների իրականացումը:
22.ըստ անահրաժեշտություն իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով չսահմանված այլ լիազորություններ.
23. ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):
24. մասնակցում է համայնքի ավագանու նիստերին՝ վարողի հրավերով: »

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մայիսի 2021 թվականի N 546

2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ՏԱՐՈՆ ԵՓՐԵՄՅԱՆԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 36 որոշումը և Չարենցավանի համայնքապետարանում 2021 թվականի մայիսի 24-ին անցկացված աճուրդային հանձնաժողովի թիվ 01 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Չարենցավան համայնք գ. Ֆանտան 4-րդ փողոց թիվ 20 հասցեի բնակիչ Տարոն Եփրեմյանին օտարել Չարենցավան համայնք գ. Ֆանտան վարչական տարածքում գտնվող 07-067-0013-0016 ծածկագրով հողամասը 2026500 /երկու միլիոն քսանվեց հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ արժեքով:
2. Նշված հողատարածքը հասցեավորել՝ ***Չարենցավան համայնք գյուղ Ֆանտան 8-րդ փողոց թիվ 6 հողատարածք***:
3. Քաղաքացի Տարոն Եփրեմյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման և պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մայիսի 2021 թվականի N 545

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Չարենցավանի 3-րդ թաղամասի 40-րդ շենքի շրջակայքում գտնվող 28.9 քմ արտաքին մակերեսով՝ Սամսոն Աթոյանի կողմից ինքնակամ կառուցված տնտեսական շինությունը /ներքին մակերես՝ 20.5 քմ/ ճանաչել օրինական համայնքային սեփականություն և ներկայացնել գրանցման:
2. Տնտեսական շինության սպասարկման նպատակով հատկացնել 28.9 քմ մակերեսով՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք.*Չարենցավան 3-րդ թաղամաս 3-րդ փողոց թիվ 6/2*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Սամսոն Աթոյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մայիսի 2021 թվականի N 544

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Չարենցավանի Ռուսովի փողոցին հարող տարածքում գտնվող 20.3 քմ արտաքին մակերեսով՝ Վիլեն Օհանջանյանի կողմից ինքնակամ կառուցված ավտոտնակը /ներքին մակերես՝ 18.5 քմ/ և պարիսպ՝ 1.4 քմ ճանաչել օրինական համայնքային սեփականություն և ներկայացնել գրանցման:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 35.4 քմ մակերեսով՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել **ք.*Չարենցավան Ռուսովի փողոց թիվ 11/2*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Վիլեն Օհանջանյանին***՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մայիսի 2021 թվականի N 543

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վիսլա» ՍՊԸ-ի տնօրեն Գ. Հակոբյանը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնքի 3-րդ թաղամաս 14-րդ շենքի բացվածքում գտնվող 50քմ առևտրի օբյեկտում, ոգելից և ակոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N2614/12 առ 2021 թվականի մայիսի 20-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N 210518089633030 անդորրագրի դիմումատուն 2021 թվականի երկրորդ եռամսյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 51-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***«Վիսլա» ՍՊԸ-ին*** 2021 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնքի 3-րդ թաղամաս 14-րդ շենքի բացվածքում գտնվող առևտրի օբյեկտում, ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք (Վկայական N 014659):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ ***Վ. Բարսամյանի*** վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մայիսի 2021 թվականի N 542

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի ԹԻՎ 16 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, քննարկելով Չարենցավան քաղաքի 6-րդ թաղամասի 1-ին շենքի թիվ 16 հասցեի բնակիչ ***Վարդան Միքայելյանի*** 2021 թվականի մայիսի 21-ի թիվ 2631/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավանի քաղաքապետի 1997 թվականի հունիսի 24-ի «Պետական, հանրային և համայնքային բնակ. ֆոնդի բնակարանների անհատույց սեփականաշնորհում թույլատրելու մասին» թիվ 16 որոշման մեջ (անշարժ գույքի գտվելու վայր՝ Չարենցավան քաղաք 6-րդ թաղամաս 1-ին շենք թիվ 16 բնակարան) ***«Միքայելյան Արաքսի»*** անունը փոխարինել ***«Միքայելյան Արաքսյա»*** անունով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀԿոտայքիմարզիՉարենցավանհամայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանիանվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մայիսի 2021 թվականի N 541

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 18-ի «Չարենցավան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 9 որոշմամբ սահմանված կարգը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները՝ ֆինանսական օգնություն ստանալու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից.

Մելիքյան	Նարեկ	AR0537765	100 000	դրամ
Վարդանյան	Մագթաղ	AT0595953	10 000	դրամ
Չոբանյան	Միշա	AM0579522	10 000	դրամ
Ավչիևա	Ինևա	AR0504525	10 000	դրամ
Բալասանյան	Վեներա	AM0815230	10 000	դրամ
Մարտիրոսյան	Ալինա	007829708	10 000	դրամ
Բարսեղյան	Լալազար	009329889	10 000	դրամ
Դավթյան	Մարինե	003705894	10 000	դրամ
Յարալյան	Գայանե	007373715	10 000	դրամ
Ալոյան	Շուշանիկ	AN0780872	10 000	դրամ
Հարությունյան	Սուսաննա	002662880	10 000	դրամ
Դավիթյան	Արմինե	AS0540528	10 000	դրամ
Վարդանյան	Լիդա	AN0749445	10 000	դրամ
Սողոմոնյան	Ալինա	008699100	10 000	դրամ
Սարգսյան	Չինաշխարիկ	AS0365584	10 000	դրամ
Աղաջանյան	Մարիտա	AN0712640	10 000	դրամ
Սուքիասյան	Շուշանիկ	AU0267624	10 000	դրամ
Շահնազարյան	Անի	AT0538072	10 000	դրամ
Վարդանյան	Անուշ	AR0414490	10 000	դրամ
Սաֆարյան	Ծովինար	AT0427096	10 000	դրամ

Մինասյան	Էդգար	AR0636685	10 000	դրամ
Ղալայան	Կալիպսե	AM0614219	10 000	դրամ
Շահնազարյան	Ռոզա	AR0586303	10 000	դրամ
Սահակյան	Արտուրիկ	AN0506100	10 000	դրամ
Օհանյան	Անի	007012438	10 000	դրամ
Սեփյան	Լիդա	001724020	10 000	դրամ
Հակոբյան	Վարդուհի	AR0504533	10 000	դրամ
Տոնյան	Նարինե	010329126	10 000	դրամ
Պետրոսյան	Գյուլնարա	AM0928247	10 000	դրամ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մայիսի 2021 թվականի N 540

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 1635-Ն որոշման դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի սեփականություն համարվող 07-037-204-002 ծածկագրով հողատարածքից առանձնացնել 0.2696 հա մակերեսով հողատարածք՝ նկատի ունենալով, որ հողամասի նպատակային նշանակությունն է գյուղատնտեսական, իսկ գործառնական նշանակությունն՝ արոտ:

2. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշմամբ ուժը կորցրած ճանաչել 2021 թ. մայիսի 19-ի թիվ 527 որոշումը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀԿոտայքիմարզիՉարենցավանհամայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանիանվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» մայիսի 2021 թվականի N 539

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 18-ի «Չարենցավան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 9 որոշմամբ սահմանված կարգը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները՝ ֆինանսական օգնություն ստանալու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից.

Մանուկյան	Ստեփան	AP0242670	100 000	դրամ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«24» մայիսի 2021 թվականի N 538

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 219.1-րդ հոդվածով՝ որոշում եմ.

1. Նվեր Խաչատրյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
2. Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2021 թվականի հունիսի 2-ին, ժամը 11:30-ին:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել վարչական վարույթի մասնակիցներին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ